

ԱՆԳԱՐԱ, 15 (ՌՈՅԹԸՐՁ)։- Թուրքիոյ մաքսատան գրասենեակին փոխ քարտուղար Նելպաթ Սալիլիօղլու Ուրբաթ օր յայտնած է, թէ մեծ ճիգեր ի գործ կը դնէ ջնջելու համար դիմագիծը՝ սպասարկութեան մը, որ այնքան խաթարուած է փտածութեամբ եւ կաշտակերութեամբ։

Թուրք պաշտօնատարներ եւ Համաշխարհային Դրամատունը կը խոստովանին, թէ արմատացած փտածութեան լայնածիր տպաւորութիւն մը կ'արգելակէ օտարներու Թուրքիոյ մէջ ներդրումներու ձեռնարկելը։

Թուրքիա Դրամական Միջազգային Ֆոնտին ի միջի այլոց խոստացած է երկիրը օտար ներդրումներու համար աւելի գրաւիչ դարձնել՝ 16 միլիար տուլար փոխատուութիւն սպառնալովու համար։

ԵՐԲ ԻՍՐԱՅԷԼ ԽՈՍՏԱՆԱՅ ԶԵՌԱՆԱԼ 1967ԻՆ ԳՐԱՒՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԶՈՂԵՐԷՆ

ԴԱՄԱՍԿՈՍ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԹԷԼ ԱՒԻՒՒ ՀԵՏ

Սուրիա խաղաղութեան բանակցութիւններու պիտի սկսի, երբ Իսրայիլ խոստանայ հեռանալ 1967ի պատերազմին գրաւուած բոլոր հողերէն, յայտնեց Միացեալ Նահանգներու մէջ Սուրիոյ դեսպանը։

Ռուսոնմ Չուիպի ըսաւ, որ իր կառավարութիւնը ամբողջական պորակցութիւն կը յայտնէ Միւսուական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալլայի խաղաղութեան ծրագիրին, որ կ'առաջարկէ Իսրայիլի ճանաչում տալ եւ կապերը բնականոնացնել, պայմանաւ, որ հրէական պետութիւնը հեռանայ 1967ի պատերազմին գրաւած արաբական բոլոր հողերէն, որոնց կարգին է Կոլանը։ Չուիպի աւելցուց, որ Դամասկոս համակարծիք է Ապտալլայի կեցուածքին։

Կը նախատեսուի, որ արաբական վեհաժողովին, որ տեղի պի-

տի ունենայ այս ամսուան ընթացքին, Պէյրութի մէջ, արաբ ղեկավարները պիտի որդեգրեն Ապտալլայի առաջարկած ծրագիրը։

Չուիպի դիտել տուաւ սակայն, որ պետք չէ անպարելի որոշելու համար, թէ արաբները ինչպիսի՞ կապեր պիտի հաստատեն Իսրայիլի հետ։ Ան ըսաւ, որ պետք է սպասել, տեսնելու համար, թէ ինչպիսի՞ կեցուածք պիտի որդեգրէ Իսրայիլ արաբական ծրագիրին ու նախաձեռնութեան հանդէպ։ Չուիպի հարց տուաւ, որ արդեօ՞ք Իսրայիլ պատրաստ է խաղաղութիւն հաստատելու՝ հեռանալով Կոլանէն։ Մինչեւ այդ պատրաստակամութիւնը չյայտնուի, Դամասկոս պատրաստ չէ խաղաղութեան բանակցութիւններուն, ըսաւ Չուիպի։

(ՌՈՅԹԸՐՁ)

ՅԱԿԱՅԱՐԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՐՈՒԿԻՆ ՏԱԿ

ՎՐԱՍՏԱՆ ԿՐՆԱՅ ԱՐԽԱԶԻԱ ՈՒԺ ՂՐԿԵԼ

ԹԻՖԼԻՍ, 15 (ՌՈՅԹԸՐՁ)։- Վրաստան կրնայ անջատողական Արխազիոյ իր շրջանը ուժեր ու լին հակաահաբեկչական գործողութիւններու համար, սակայն կառավարութեան մէկ պաշտօնատարը Ուրբաթ օր յայտնած է, թէ զինուորական յարձակողական մը օրակարգի վրայ չէ՛ նախագծող զարմեալ ձեռք ձգելու համար։

Ամերիկեան մասնայատուկ ուժերու մարզիչներ այս ամիս պիտի հասնին Վրաստան՝ երկրին ուժերը մարզելու համար ըմբոստութեանց դէմ գործողութիւններու մէջ։

Ուժերուն առաքելութիւնը վրացական զինուոր ուժերը մարզել է, որպէսզի անոնք «Քայլիտա» ցանցին հետ կապ ունեցող զինեալներէ ձերբազատին Փանքիսի կիրճը։

Սակայն ուշադրութեանց առանցքը շեղած է եւ դարձած այն կարեկիւրութեան վրայ, թէ Վրաստան իր նոր մարզուած ուժերը կրնայ օգտագործել 1993ին կորսնցուցած Արխազիան վերագրաւելու համար։

Արխազիա կը վայելէ Ռուսիոյ անպաշտօն պաշտպանութիւնը եւ որեւէ գործողութիւն վրացական ուժերը նա-

հանգիմ մէջ գտնուող ռուս խաղաղարար ուժերուն դէմ յանդիման պիտի դնէ։

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Քայա Սիխարուիժեմ յայտնած է, թէ գործողութիւնները կրնան տարածուիլ երկրին որեւէ մէկ բաժինը, ներառեալ Արխազիա, սակայն Վրաստան նոր պատերազմ մը սկսելու ծրագիր չունի։

Վրացի պաշտօնատարներ անցեալ շաբաթ յայտնած են, թէ Արխազիա «Քայլիտա» ցանցին հետ կապեր ունի, յայտնապէս հանրային կարծիքը պատրաստելու զինուորական գործողութեան մը հաւանականութեան՝ ահաբեկչութեան դէմ ամերիկեան պատերազմին անուան տակ։

Արխազիոյ կառավարութիւնը, որ որեւէ պետութեան կողմէ ճանչցուած չէ, Վրաստանի մէջ ամերիկացի մարզիչներու հաստատումը սպառնալիք կը նկատէ։ Անիկա Մոսկուայի հետ «յատուկ գործակցութեան» կոչ ուղղած է։

Ռուսիոյ խորհրդարանի մէջ ծայրայեղական կարգ մը անձնատրութիւններ գործակց կանգնած են նշեալ գաղափարին, սակայն կրեմլին ուշադիր է շեշտելու, թէ գործակց կը կանգնի Վրաստանի հողային ամբողջականութեան։

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը անցեալ շաբաթ յայտնած է, թէ ամերիկեան երաշխիքներ ստացած է, թէ անոնք չեն սակնկալեր, որ վրացական ուժեր Արխազիոյ կամ անջատողական այլ նահանգ մը հանդիսացող Հարաւային Օսեթիոյ մէջ պատերազմին։

Սիխարուիժեմ յայտնած է, թէ այդ խոստումը տակաւին ի գորու է։

ԻՍՐԱՅԷԼ ԿԵՐՋ ՏՈՒՄ ՌԱՄԱԼԼԱՅԻ ԳՐԱՒՈՒՄԻՆ



Պաղեստինցի կին մը կ'ողբայ իր տան փլատակներուն վրայ՝ Կազայի մէջ։

Իշխանի նախաձեռնութիւնը, որ պիտի որդեգրուի արաբական վեհաժողովին կողմէ։ Արաֆատ ըսաւ, որ վարչապետ Արիէլ Շարոն փոխանակ զրական հակադարձութիւն մը ցուցաբերելու սնուակն խաղաղարար նախաձեռնութեան, ժխտական միջոցներ մը կը ստեղծէ։ Շարոն ցարդ չէ արտօնած Արաֆատի մասնակցութիւնը Պէյրութի վեհաժողովին։

Իսրայէլեան բանակը իր կարգին յայտնեց, որ այս յորդանանեան երկու այլ քաղաքներէ ալ հեռացած է, թէ կը պաշտպանուի պաշարների ղեկավարը դիտելու տուաւ նաեւ, որ կազմուելու Այսրորդանանի քաղաքներն ու զիւղերը վերստին գրաւելով՝ Իսրայիլ կը սպաննէ խաղաղութեան յոյսերը, որոնց կարգին է Սէնուական Արաբիոյ զահաժառանգ

ուժերուն հեռացումը աւելի զրական ու նպատակ միջոցներ մը պիտի ստեղծէ Չինի առաքելութեան համար, որուն նպատակն է զիւղերու մը հաստատել գործադրութեան զնելու համար թեւեւ ծրագրի։

Չինի, որ Իսրայիլ հասած էր Հինգ շաբթի երկուշաբթի, երէկ հանդիպում ունեցաւ պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն էլիզաբարի անարտին, Չինի ըսաւ, որ սկզբնական քայլ մըն էր արժեւորելու համար կացութիւնը եւ տեսնելու համար, թէ ո՞ր կանգնած են։ Պրն էլիզաբար իր կարգին ըսաւ, որ շատ մը կէտերու մասին համաձայնութիւն գոյացուցած են։ Իսրայիլացի նախարարը սակայն չըսաւ, թէ ինչ կէտերու մասին գոյացած է համաձայ-

նութիւնը։

Անթընի Չինի երկուշաբթի տեսակցեալ երեսը Արաֆատի հետ, որ ամբողջութեամբ բանազնացին վստահեցուց, թէ պաղեստինեան իշխանութիւնը կառչած կը մնայ Օսլոյի խաղաղութեան համաձայնագրին։

Մինչ այդ, բախումներն ու զինեալ միջադէպերը շարունակուեցան պաղեստինցիներուն եւ Իսրայիլացի զինուորներուն միջեւ։ Կազա - Իսրայիլ սահմանագիծին վրայ տեղի ունեցած երկու միջադէպերու ընթացքին Իսրայիլեան ուժերը պաղեստինցի երկու օստիկաններ սպաննեցին։ Բանակը մեկնաբանութիւն չկատարեց։ Իսկ Կազայի հիւսիսային շրջանին մէջ, հրէական բնակեցման վայրի մը մօտ, Իսրայիլեան ուժեր սպաննեցին պաղեստինցի մը։

Շար-ը՝ էջ 10

ՀՕՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ



ՀՕՄԻ նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը։ Չախէն աջ՝ Յ. Տէրտերեան, Ա. Պետրոսեան, Հ. Նաճարեան, Ա. Մէյմարեան, Մ. Կարապետեան, Մ. Միհասեան, Մ. Ստեփանեան, Հ. Մերճեան։ Նկարէն կը բացակայի Ս. Գահրաբալեան։

Աթէնքի մէջ կայացած ՀՕՄԻ համահայկական 67րդ պատգամաւորական ժողովը երէկ ընտրեց նոր Կեդրոնական Վարչութեան կազմն ու փոխ անդամները։ ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան Յասմիկ Տէրտերեան, Ալվարդ Պետրոսեան, Հուրի Նաճարեան, Անահիտ Մէյմարեան, Մայրա Կարապետեան, Մարո Միհասեան, Մարգրիտ Ստեփանեան, Հելէն Մերճեան եւ Սիլվա Գահրաբալեան։

Փոխ անդամ ընտրուեցան Սանտրա Վարդանեան, Սոնիա Պետրոսեան-Փելթեան, Մարո Ֆուրուհեան, Կարինէ Յովհաննիսեան, Լուսի Շանկայեան եւ Իգապէլ Աթթարեան։

ԹԱԼԵՊԱՆ ԵՒ «ՔԱՅԻՏԱ» ԶԻՆԵԱԼՆԵՐ ՆՈՐ ՀԱՐՈՒԱԾՆԵՐ ՊԵՏՔ Ե ԱԿՆԿԱԼԵՆ

Կ'ԸՍԵ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՆԱԿԸ

Ամերիկեան բանակը երէկ կոչուցուցած է արեւելեան Աֆղանիստանէն խոյս տուող թալեպան եւ «Քայիտա» պիւնեալները, թէ պետք է անոնք յաւելեալ հարուածներ ակրնկալեն, եթէ վերադառնան, մինչ պիտուրները Շահի Քոթի մէջ ռազմական տր հետապնդումներու գործողութիւնները կը շարունակեն՝ լեռնային քարայրներուն մէջ ըմբոստներու փնտրութիւնով։

Ամերիկեան իմբակներն նաեւ Ա. Տէ. Էն. ի փաստեր հաւաքած են՝ այն յոյսով, թէ տեղեկութիւններ պիտի գտնեն ըմբոստ բարձրաստիճան ղեկավարներուն շարժումներուն մասին։

Անցնող 2 շաբաթներուն սաստիկ բախումները վերածուած են ֆետայական պատերազմի մը, որուն ընթացքին հարիւրաւոր ըմբոստներ կամ սպաննուած են կամ 4 կամ 5 հոգիներ փոքրիկ իմբակներու բաժնուած են՝ ռազմական տր հետապնդումներով։

Աֆղանիստանի մէջ ցամաքային ուժերու հրամանատար պորավար Փոլ Միքոլաշէք նախատեսած է, թէ Աֆղանիստանի մէջ յաւելեալ ճակատամարտեր տեղի պիտի ունենան ըմբոստներուն դէմ, որոնք կրնան այլ վայրերու մէջ պահուրտիլ։

(ՌՈՅԹԸՐՁ)

Հ. Կ. Յ. Մ. Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

1000 ԱՄԵԱԿ



Հանդիսութեան ընթացքին: (Լուսանկարը՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

Կազմակերպութեամբ Հայ Կաթողիկէ Համալսարանական Միութեան, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Ներսէս Պետրոս ԺԹ Թարմունի պատրիարքին, երէկ՝ Ուրբաթ, 15 Մարտին, Հայ Կաթողիկէ պատրիարքարանի «Արարատեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» 1000ամեայ յորելեանին նուիրուած հանդիսութիւն մը:

Ներկայ էին պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Ազգարեան, երեսփոխաններ Ժան Օղասապեան եւ Սերժ Թուր

Շարք՝ էջ 10

ՍԱՀԱԿ ԱՐՔ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

Պաշտօնական այցելութեամբ Յունաստան գտնուող Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Աթէնքի քաղաքական գիտութիւններու Փանդիո համալսարանին մէջ տուաւ դասախօսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան պետական անձնաւորութիւններ եւ այլ հիւրեր, որոնց շարքին՝ Յունաստանի Հայոց թեմի առաջնորդ Սահակ արք. Այվազեան:

Դասախօսութեանն ետք, հիւրասիրութեան ընթացքին արքայան հայրը առիթը ունեցաւ կրօնական նախագահ հարեմի հետ, Արամ Ա. Կաթողիկոսին հետ Խաթեմի հանդիպումին, Իրանի հայկական գաղութին, Հայաստան - Իրան եւ Հայաստան - Իրան - Յունաստան գործակցութեան մասին:

ՃՇԴՈՒՄ

ԼՕՄական մը ԼՕՄի Էշրեֆի «Սիւրբ Տէր Սեղոնեան» դարձանատան 2000 տոլար կը նուիրէ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀՐԱԶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան կաշտօն պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 16 Մարտ 2002ի առաւօտեան, Աճառիկի ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Հ. Կ. Յ. Մ. - Ե. Ե. Ե.

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԳՐՈՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ ԻՆՉ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ ՄԵՐ «ԱԶԳԱՅԻՆ» ԿԱՌՈՅՑՆԵՐԸ («ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ»-Ի ՊՐԻՍՍԱԿԵՆ) Կը մեկնաբանէ ՍԵՐ ԳԱՄԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 20 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» կեդրոնին մէջ, Ուսարտ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Երուանդ Յովակիմեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յարութիւն Տէր Գէորգեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Յակոբ Տէր Գէորգեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, աներմօր եւ հարազատին:

ԱՐՈՒՍԵԱԿ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆԻ (Ծնեալ՝ ՅԱԿՈԲԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ամսթերտամի մէջ, Հոլանտա, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ամսթերտամի մէջ:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին տեղի տիկին Երուանդ Յովակիմեանի բնակարանը, Ժուլիտե, «Ղուսուպ» շէնք, Նամակատան դիմաց, Բ. յարկ, Շաբաթ 16 եւ Կիրակի 17 Մարտին:

ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԵՅԹԻ ԵԼԵԲՄՈՒՏՔԻ ՆԱԽԱՐԱՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց Քուէյթի ելեւմուտքի եւ ծրագրումի նախարար Եուսէֆ Համատ Իպրահիմը, որուն կ'ընկերակցէր Քուէյթի դեսպան Ալի Սիւլեյման Սալիտ:

Քուէյթցի պաշտօնատարը յայտնեց, որ Հարիրի ներկայացուցած է Լիբանանի տնտեսական ծրագիրները, որոնք վստահութիւն կը ներշնչեն արաբ ներդրողներուն Լիբանանի տնտեսական վիճակին ու ապագային նկատմամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԱԽԵԱԼ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԷՆ

Կ'ԸՍԵ Բ. ՇԵՐՈՒՄԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ

Քըրնէթ Շեհուանի հանդիպումի անդամները երէկ գումարեցին ժողով մը, որուն աւարտին հաղորդագրութեամբ մը վերահաստատեցին, որ տնտեսական տագնապի լուծումը կախեալ է քաղաքական բարեկարգումէն երէն: Անոնք պահանջեցին արագրել լիբանանեւտրիական յարաբերութիւններու սխալները եւ վերջ դնել վարչամեքենայի փտածութեան:

«Տնտեսական փլուզումը կանխարգիլելու պատրուակով կառավարութեան միջոցառումները կը ցուցնեն ժողովուրդը, իսկ տնտեսական տագնապի պատասխանատուն իշխանութիւնն է, որոշումներ տուող է պետական գումարներ իւրացնողը»,

ըսաւ հաղորդագրութեան մեքենայի տնտեսաբանութիւնը ընդդիմութեան ուսերունքեցնելու անտրամաբնական փորձը, որ համայնքային ոճ ունի: Հաղորդագրութեանը ողջունեց Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի Լիբանան տուած դրական այցելութիւնը, որ խորհրդատու է շինիչ էր:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Այսպիսով մարտի 16-ին Քուէյթի Ելեւմուտքի եւ Երկրակցութեան նախագահ Աբրահամ Մաթոսեան յայտնեց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրի հասկացողութիւնը ցուցաբերած է ապահովագրութեան ընկերութիւններու պահանջներուն նկատմամբ եւ իւր տագնապ է ճիշդ օրինակ անոնց գործունէութեան դէմ ցցուած արգելքները վերացնելու համար:

Մաթոսեան նշեց, որ ապահովագրութեան ընկերութիւններուն պարտադրուած տուրքերը կը դժուարացնեն անոնց աշխատանքը:

Մաթոսեան նշեց, որ ապահովագրութեան ընկերութիւններուն պարտադրուած տուրքերը կը դժուարացնեն անոնց աշխատանքը:

ՍՏԱՑԱՆՔ

«ԼՈՒՍԱՐՉԱԿ» Դիտումներ - դատումներ նոր դար Ընդհանր ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ Փարիզ

ՍՈՒՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՅՍՕՐ ԼԻԲԱՆԱՆ Կ'ԱՅՑՅԵԼԷ

Սուրիոյ վարչապետ Մոհամէտ Մուսաֆա Միրո այսօր՝ Շաբաթ, կը ժամանէ Պէյրութ, վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ համախառնապէս համար լիբանանեւտրիական տնտեսական յանձնարարութիւնը ժողովին:

Օրակարգի վրայ պիտի ըլլան երկու երկիրներու տնտեսական եւ ընկերային մարզերէն ներս գործակցութիւնը, Սուրիայէն Լիբանան բնական կապ փոխադրելու ծրագիրը, հիւսուածեղէնի եւ ծխախոտի միացեալ գործարաններու կառուցման եւ քարիղի երկու կտարաններու միասնաբար օգտագործման ծրագիրները, Ասի գետի օգտագործումը, ելեկտրական ցանցերու միացումը եւ երկրագործական ու ճարտարարուեստական հարցեր:

Միրո այս առիթով հանդիպումներ պիտի ունենայ լիբանանցի պաշտօնատարներու հետ քննարկելու համար շրջանային կարգացումներն ու երկկողմանի յարաբերութիւնները կարգացնելու միջոցները:

ՀԸՐԱՌԻ ԵՒ ԱՐԻՏԻ ԿԸ ՀԱԿԱԶԳԵՆ ԻՍՐԱՅԷԼԻ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի եւ տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի երէկ հակադրեցին իսրայէլեան այն վարկածին, թէ հիւսիսային Իսրայէլի «Շըլոմ» ի բնակեցման վայրին վրայ յարձակած զինեալները Լիբանանէն եկած են:

Պաշտպանութեան նախարարը հաւաստեց, Շարք՝ էջ 10

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԻՆԹԻՖԱՏԱՅԻՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ընդհանուրութեամբ՝ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԸ ԶՕՐ. ԷՄԵԼ ԼԱՀՈՒՏԻ Կիրակի, 17 Մարտ 2002, առաւօտեան ժամը 11:00ին, ԵՌԻՆԵՍԸՕԻ սրահին մէջ:

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐՈՒՄՍ

Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈՅԻ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆԴԱՄ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺԵՄԱՐԱՆԻ ԲԱԶՄԱԿԱՍԱԿ ՏՆՕՐԷՆ՝

ՀՐԱԶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆԻ (ՄԱՀՈՒՄ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

Խօսք կ'առնեն՝

ՅԱԿՈԲ ՀԱՒԱԹԵԱՆ - ԱՌԻԲԷՆ ՅՈՎԱԷՓԵԱՆ ԴՈԿՏ. ՀՐԱԶ ՀԱՃԷԹԵԱՆ - ԵՐՈՒՄԵՆԻ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՅ ՉՈՐԵՔՉԱԲԹԻ, 20 ՄԱՐՏ 2002, ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԻՆ, «ՅԱԿՈԲ ՏԵՐ ՍԵԼՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԷՋ:

Հ. Բ. Ը. Մ. Պ. ԿԱՐՄԻՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՀԱՅ ԴՊՐՈՅԸ ՅՈՒՋՈՂ ՀԱՐՅԵՐՈՒ ԾՈՒՐՋ



Կլոր սեղանին ներկայացրէ՞ն պատկեր մը: (Լուսանկարը՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

Հ. Բ. Ը. Մ. Պ. Գ. Կարմիրեան վարժարանի Շրջանաւարտից Միութեան կազմակերպութեամբ, երէկ՝ Ուրբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 8:00ին, վարժարանի հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ «Յո երթաւ Հայ Դպրոց» խորագիրով կլոր սեղան մը:

Հանդիպում-պրոյցին ներկայ էին վարժարաններու տնօրէններ, դասախօսներ, ուսուցիչներ, ծնողներ, ինչպէս նաեւ հայկական վարժարանի ապագայով մտահոգ հայրերին:

Կլոր սեղանի պեկուցաբերներն էին Նորա Սիւլահեան, Հրաչ Գարամանուկեան, Արմէն Իւրնէշլեան եւ Սեպուհ Միսեան: Բացման խօսքը արտասանեց եւ կրօնը վարեց Հրաչ Սեփեթեան. որ հակիրճ կերպով ներկայացնելէ ետք Շրջանաւարտից Միութեան աշխատանքները, շեշտեց հայ դպրոցին ապագայով մտահոգուելու եւ անոր կառոյցին վրայ քար մը աւելցնելու անհրաժեշտութիւնը: Ապա ան ներկայացուց պեկուցաբերները:

Հանդիպումին ընթացքին իւրաքանչիւր պեկուցաբեր ունեցաւ կարճ ելոյթ մը:

Առաջին խօսք առնողը եղաւ Արմէն Իւրնէշլեան, որ փորձեց պատասխանել «Ի՞նչու հայ դպրոց» հարցադրումին: Ան հակիրճ քաղաքական մը կատարեց հայ եւ օտար դպրոցներ:

Շարք՝ էջ 10

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

«ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ» ՈՒՒՄԸ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԵԾԱՀԱՆԿԵՍ ԹԱՓՕՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն Ի Վերապի տօնին՝ «ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»-ուան առիթով, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները. -

- ՇԱԲԱԹ՝ 16 Մարտ, առաւօտեան ժամը 9:30ին՝ Ս. պատարագ
- ՇԱԲԱԹ՝ երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտաւորութեան:
- ԿԻՐԱԿԻ, 17 Մարտ, Սուրբ եւ անմահ պատարագ, որուն պիտի հետեւի մեր Հաւատոյ չօր՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ԱԶՈՎ զխաւորուած արքայան մատուցներու թափօրը Անթիլիասի Մայրավանքի շրջակայքին մէջ, մասնակցութեամբ Միաբան հայրերու եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագ էւ քարոյէ ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Արարողութեանց եւ թափօրին պիտի հանդիսապետէ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն ժամը 8:30ին Ս. պատարագ ժամը 10:00ին Բարոյ ժամը 11:00ին Ս. Աջերու եւ այլ Սրբոց Մատուցներու թափօր ժամը 11:30ին Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր պատկերը՝ մասնակից դառնալու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի Օրուան հոգեպարար արարողութիւններուն:

ԴԻՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԿԵՆՍՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԵՐԿՐԱԶԱՓՆԵՐՈՒ

Պետական պաշտօնեաներու հարցերու խորհուրդը կը յայտարարէ, որ քննութիւն - մրցանքով պիտի ընտրուին կենսաբանական գիտություններու համար կենսաբանական մարզի գաճազան երկրաչափներ:

Քննութիւն - մրցանքին մասնակցելու համար դիմումները պէտք է ներկայացնել ամենէն ուշը Հինգշաբթի, 28 Մարտ 2002ին, խորհուրդի կեդրոնատեղին, Ռաշիտ Զարաթ փողոց (Վերտօն):

Յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Յաղոյեան» կեդրոն:

ԸԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԽԱՆԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ԿՈՐԻԶԱՅԻՆ ԶԵՆՔԵՐՈՒ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

ՄՈՍԿՈՒԱ - ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԵՆ ԼՈՒԾՈՒԱԾ

ՄՈՍԿՈՒԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանով Ուրբաթ օր յայտնած է, թէ այս շաբաթ Ռուսիայի մէջ կայացած բանակցութիւնները չեն կրցած կորիպային ապապինման գծով տարակարծութիւններ լուծել:

ՀԸՐԱՌԻ ԵՒ ԱՐԻՏԻ...

Ծարուակուած շրջ էջէն որ այս յայտարարութիւնները ճիշդ չեն եւ իրաւիքներն այս վարկածը ոչ մէկ հիմնունի եւ ոչ մէկ իրողական տուեալի կ'ապաւինի, այլ պարզապատեղեկատուութիւն է, որ կ'իյնայ Լիբանանի վրայ ի գործ դրուող ճնշումներու ծիրին մէջ:

ԾԱՆՈՒ Ե ԿՈՒՋՈՒԻՆ
•Նոդարկաբաժին մը, 140 բաժնէք, Պաշտպան, Մար Եուսէֆ փողոց, գեղատեսիլ դիրք: Հեռ. 01-899718:

ՆԱԽԱԳԱՐ ԽԱԹԵՄԻ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԵ ՌԻԱՇԻՆԿԹԸՆԸ

Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի Մ. Նահանգները քննադատած է, որովհետեւ անոնք կը փորձեն Սեպտեմբեր 11էն ետք ստեղծուած մթնոլորտը իրենց ի շահ օգտագործել: Ան յայտնած է, թէ Մ. Նահանգներ օր մը Եւրոպան պիտի ներառեն իրենց «չարութեան առանցք»ին մէջ:

առանցք» ներկայացուցած է, ըսելով, թէ անոնք կը փորձեն հաւաքական քանդակի պէտքեր մշակել եւ պարտաւորել իրենց զինուորը: Միւս կողմէ, Խաթեմի Յունաստան այցելութեան ընթացքին քանի մը առիթներով քննադատած է Մ. Նահանգները, որոնք, ըստ օրաթերթերու տեղեկութեանց, կրնան կորիպային պէտքեր գործածել քանի մը երկիրներու, ներառեալ Իրանի դէմ:

«Չարագման ընթացքի մէջ գտնուող շրջան մը պիտուորական ուժերու ներկայութեան կարիքը չունի: Անկախ ցորակութեան պէտք ունի», ըսած է Խաթեմի: Խաթեմի, որ Յունաստան ետորտայցելութիւն մը տուած է, յայտնած է, թէ Մ. Նահանգներ Աֆղանիստանի մէջ պատերազմը կ'օգտագործեն՝ ամրապնդելու համար իրենց դիրքը իբրեւ աշխարհի միակ գերուժը:

Կորիպային պէտքերու հաստատումին համար: Միւս կողմէ, Հիւսիսային Քորէա երկկայտարարած է, թէ ամերիկեան հողամասերը «ապահով պիտի չըլլան» եթէ Մ. Նահանգներ համայնապար Հիւսիսային Քորէայի մէջ կորիպային հարուածի ձեռնարկեն:

ԵԹԵ ՄԱԿԻ ԿՈՂՄԵ ԳՈՎԱՆԱԲՈՐՈՒԱԾ ԶԸԼԼԱՅ

ԳԵՐՄԱՆԻԱ ՊԻՏԻ ԶՄԻԱՆԱՅ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԿՈՂՄԵ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ

Գերմանիա պիտի չմիանայ Միացեալ Նահանգներու կողմէ առաջնորդուած որեւէ պատերազմի (օրինակ Իրաքի դէմ), եթէ անկա ՄԱԿի հովանաւորութեամբ չըլլայ, յայտնեց կառավարութեան բանքեր մը երէկ:

Իրաքը դժուարութիւն մըն է, կոր պիտի յաղթահարէ Ռուսիայի կողմէ: Ռամատան աւելցուց, որ իշխանութեան հասնելի ի վեր, Պուշտին ղեկավար մը, որ այս կամ այն երկրին դէմ սպառնալիքներ կ'ուղղէ, կամ յարձակումներ կը գործէ: Ռամատան ըսաւ նաեւ, որ չ'արժէր մեկնաբանութիւն կատարել նման արտայայտութեան մը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՍՄԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՍ)
ԸԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՅ
"I AM WHAT I'VE GOT"
Հանդիպում - գրոյց գեղանկարիչ ԱՐԱ ԱԶԱՏԻ հետ, որ պիտի ներկայացնէ արուեստի իր մօտեցումները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Առ տիար Մելքոն Ազատ Մաճառեան: Լիբանանի Հայոց թեմի դատաստանական խորհուրդի իր 21 Փետրուար 2002 թուականին կայացուցած Դ. ճիւղին գրառեցած էր ընտանեկան հարցով:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ
Նուիրուած՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵԹԵԱՆԻ ԱՐՈՒԵՍԱԳԵՏ - ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Հանդիսապատուեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ
Ընդառաջելով Համազգայինի Կեդրոնական Վարչութեան խնդրանքին, վեհափառ պիտի պարգևատրէ Մեծարեալը «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՏՈՅ»-ի շքանշանով:

ԼԻԲԱՆԱՆԻ ԶԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԸՐԱԷՐ

Սեկտելով Լիբանանի Զարտարարութեան Միութեան հիմնական օրէնքներու 55րդ յօդուածն, միութեան տնօրէն խորհուրդը անդամները կը հրաւիրէ տարեկան ընդհանուր ժողովի մը, որ պիտի կայանայ Կիրակի, 7 Ապրիլ 2002ին, Լ. ճ. Միութեան Արտածուելիք Առարկաներու Բարձրագոյն Կեդրոնին մէջ, Պէյրութի նախահանգիստ:

ՊԱՐՍԵԼՈՆԱՅ ՄԷՋ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՅՈՒՄՈՂՈՎԸ ՍԿՍԱՐ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

ՊԱՐՍԵԼՈՆԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ)։- Եւրոպական Միութեան ղեկավարները Ուրբաթ օր Պարսելոնայի մէջ սկսան վեհաժողովի մը, որուն առաջին անգամ ըլլալով մասնակցեցան գլխաւորաբար նախկին համայնապար 13 պետութիւններ:

Միւս կողմէ, Հիւսիսային Քորէա երկկայտարարած է, թէ ամերիկեան հողամասերը «ապահով պիտի չըլլան» եթէ Մ. Նահանգներ համայնապար Հիւսիսային Քորէայի մէջ կորիպային հարուածի ձեռնարկեն:

ՌԻԱՇԻՆԿԹԸՆԸ ԿՈՂԹԻՓՈՂԻԻ

Միացեալ Նահանգներ կոչ ուղղեցին Լիպիոյ անհրաժեշտ նկատուող մնացեալ քայլերն ալ առնելու, որպէսզի կարելի ըլլայ ջնջել ՄԱԿի կողմէ հաստատուած պատժամիջոցները:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒՐՈՒՄԸ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆԻ
Հովանաւորութեամբ
ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԱՐԱՄ Ա. ԿԵՐԱՓԱՌ ԸԱՅՐԱՊԵՏԻՆ
•ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
•ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
•«ԱԶՂԱՊՈՏԻՄ»-Ի ՆՈՐ
ԸՆԴԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 18 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:00ին, կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի «Գ. Կիլիկեան» սրահին մէջ:

«ԶՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵՒԻՐՈՒՆԻ
ՎԻՃԱԿԱՆ ՆՈՒՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ
15 ՄԱՐՏ 2002
«Զուարթնոց» կեդրոնի վիճակահանութեան շահող թիւերը հետեւեալներն են.- 701, 734, 1536, 1546, 1548, 1797, 2592, 2623, 3201, 3769, 4145, 4275, 5062, 5838, 5887, 6229, 6746, 6983, 7820, 8192, 8359, 8555, 8990, 9258 եւ 9538:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՄԻՐԱՅ ԵՐԱՅՐԱՎԿՅՈՒԹԻՒՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ՄԵԾ ՊԱՇՏՊԱՆՔՆԵՐՈՒ
Հայ Առաքելական Եկեղեցւորաց Եղբայրակցութեան երիտասարդացի պաշտամունքներուն պիտի պատգամեն Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրերը:
Կիրակի, 17 Մարտ 2002
«Գալստեան Կիրակի» ժամը 5:30էն 6:30
ԸՈՒՑ. ՄԱՇՏՏՈՅ ԿՐԻ. ԶՈՊԱՆԵԱՆ
ԸՐԱԷՐ

ԵՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆԻ ՄԱՇՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ



ժամանակը եւ միջավայրն իրենք են սահմանում այն-պիսի Մեծի տիրական եւ մնայուն ներկայութեան անհրաժեշտութիւնը՝ ինչպիսին Հրաչ Տասնապետեանն է:

Նրա կեանքի էջերում խտացուած էր Սփիւռքի ամբողջական իրողութիւնը:

Մարդկային առինքնող յատկանիշներով օժտուած Տասնապետեանը պատկառելի գործօն էր ազգային ու բարոյական դաստիարակութեան, հայեցի տոկուն նկարագրի կերտման եւ այն հարազատ ու անաղարտ պահելու նուիրական գործում:

Իրրեւ Զ. Յ. Դ. առաքելութեանը գինուորագրուած եւ կազմակերպութեան հնոցում անձապատասխանատու դեկավարը միշտ պարտաւորուած էր զգում ապագան իմաստնօրէն կանխատեսելու եւ գալիքը նախատեսելու հարցում:

Առանձին հմայք ունէր կրթական գործիչ Տասնապետեանը: Սփիւռքի պայմաններում կենսական դեր ու պարտականութիւն ունեցող հաստատութիւնը՝ «Նշան Փալանճեան» ճեմարանը նրա ղեկավարութեամբ դարձաւ հայկերտումի այն օճախը, որի սաները աշխարհի բոլոր կողմերում ազգային - կրթական գործի պատուաւոր ծանրութիւնն են կրում:

Քաղաքական մտքի խորութեամբ աչքի ընկնող պատմագիտական երկերով գիտնական Հրաչ Տասնապետեանի կող-

մից հայ ժողովրդի ազատագրական պայքարի էություն վերահանումը լուրջ աւանդ է մեր ժողովրդի պատմական ընթացքի քաղաքական հիմնաւորման հարցում:

Նա տեսաւ իր սերնդի համար երազ համարուող Հայաստանի ազատութիւնն ու անկախութիւնը: Խոհուն քաղաքական գործիչի միտքը պարուրուած էր հայրենիքում խաղաղ ու առողջ միջնորոտի ապահովմամբ, Հայաստանի առաւել ամրացման, Արցախի ազատագրական պայքարի հզորացման, հայրենիքի ու Սփիւռքի միջեւ առողջ գործակցութեան ուղի հիմնելու մտահոգութեամբ:

Սփիւռքը կազմակերպօրէն ամուր կազմայնօրէն առողջ պահելու, խորապէս ինքնագիտակից ու արթուն տեսնելու, Հայաստանին ու Արցախին հնարաւոր բոլոր միջոցներով առաւելագոյն օժանդակութիւն ցուցաբերելու հրամայականը, որին ամբողջութեամբ նուիրաբերեց իր կեանքը Հրաչ Տասնապետեանը, այսօր էլ մնում է հայկական կեանքի առաջնօրէն ապահովող կարեւոր գործօն, իսկ Տասնապետեանի կեանքը՝ այդ գործին նուիրաբերման ուսանելի օրինակ:

Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարար ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՒԱՆԴՆԵՐՈՒՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՊԱՀԱՊԱՆ՝ ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ (Հատուած)

Վերջին 40 տարիներու դաշնակցական իրականութեան տիրական դեմքերէն մէկը եղաւ Հ. Տասնապետեան:

Արժանաւոր ընտանիքի գաւակ էր մեր ողբացեալ ընկերը: Ծնողըրը նուիրեալ դաստիարակներ եղած են Սփիւռքի օրրան՝ Հալեպ քաղաքին մէջ: Հօրեղբայրը՝ գգայուն բանաստեղծ Յակոբ Սիմոնի, երկար տարիներ Սուրիոյ շրջանի վաստակաւոր գործիչ էր: Ընտանեկան յարկին մէջ, հարազատներու գաղափարական շունչին տակ ու աճունց ազգին խմորով կը բրծուի ապագայ կուսակցական-հասարակական գործիչին նկարագիրը:

Հ. Տասնապետեանի սկզբնական հետաքրքրութեան առարկան եղաւ հայկական հին ճարտարապետութիւնը: Տակաւին երիտասարդութեան սեմին, այս նիւթին մասին գրեց յօդուածներ, տուաւ դասախօսութիւններ: Ան թէեւ համալսարանական ուսումը առաւ եւ մասնագիտացաւ բնագիտութեան եւ քիմիագիտութեան ասպարէզներուն մէջ, բայց հաւատարիմ մնաց իր «առաջին սիրոյն» եւ շարունակեց իր ուսումնասիրութիւնները ուրարտական ճարտարապետութեան՝ Տուշպայի, Արգիշտիի, Թէյշէքայի հին կառոյցներուն, օսմանեան ժամանակաշրջանի ճարտարապետ՝ հայագի Սիւնանի կերտած կոթողներուն եւ հայկական այլ յուշարձաններու ոճին ու արվեստի մասին: Իր պատրաստութեամբ հրատարակուած են նաեւ դասագիրքեր:

Ընտանեկան յարկէն դուրս Հ. Տասնապետեանի նկարագիրը կը կազմաւորուի Հ. Յ. Դ. Պատանեկան եւ «Ձաւարեան» Ուսանողական Միութեանց մթնոլորտին մէջ: Կանուխէն ան կը միանայ Դաշնակցութեան շարքերուն եւ մինչեւ կեանքին վերջը հաւատարմօրէն ծառայեց իր կուսակցական Ուխտին: Ֆինանսային իր հասարակական գործունէութեան ընթացքին, ան առաւելաբար ճանչցուեցաւ իր դաշնակցական հանգամանքով: Աւելորդ չենք նկատեր այս առիթով դիտել տալ, որ «Ն. Փալանճեան» ձեմարանի տնօրէնի պաշտօնը ան ստանձնեց ու վարեց իրրեւ կուսակցական պարտականութիւնը:

* * *

Որքան ուժեղ էր մեր ընկերոջ տրամաբանութիւնը, նոյնքան եւ աւելի հարուստ էր նուրբ գագուտներով: Վերապահ իր երեւոյթին տակ բարձրուած էր անոր ջերմ բնաւորութիւնը: Բանի թէ գործով անկեղծ, հաւատարիմ ընկեր-բարեկամ էր: Իրրեւ դաշնակցական, ան մեր կուսակցութիւնը կը համարէր իրենց Ուխտին հաւատարմութեամբ՝ առանց սակարկութեան, առանց փոխարինութեան ակնկալութեան, ծառայող անդամներէ բաղկացած նահապետական ընտանիք, կառավարուած աւանդութիւններով, ազնիւ գաղափարներով:

Իրրեւ ապացոյց իր այս համոզումներուն, ընկեր Հրաչ իր բովանդակ կեանքը վերածեց Գաղափարին նուիրուած պատարագի: «Համազգային»-ի «Ն. Փալանճեան» ձեմարանի տնօրէնի, Հ. Յ. Դ. Բիւրոյի անհատում գործերէն յոգնած իր մտքին ու մարմնին հանգստութիւն փնտելու փոխարէն, ան նախընտրեց իր արձակուրդները անցընել մեր կուսակցութեան գիւղատնտեսներու փակ սենեակներուն մէջ, Դաշնակցութեան անմահներուն հոգիներէն սրբազան հաղորդութիւն անցնելով:

Աշխատանքի հերոս... Կա՞յ արդեօք աւելի վայել ու պատշաճ բնութագրութիւն մը իր անձնաւորութեան համար: Յետոյ, մեր մայրենիին ո՞ր քաղցրահամ բառով որակել իր հսկայական, պատկառելի վաստակը:

ՅԱԿՈՒ ՄԱՆՆԻԿԵԱՆ

ՄՏԱԻՈՐԱԿԱՆԻ ՏԻՊԱՐԸ՝ ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆԻ ՄԷՋ

(Հատուած-1997, Կլեմտէյլ, Հ. Տասնապետեանի մեծարանքի ձեռնարկ)

Իր երկրորդական ուսման աւարտին, Հրաչին առջեւ կը բացուէին բազմաթիւ կարելիութիւններ: Նկատի ունենալով իր անմիջական ընտանիքին հայ դպրոցին ու դպրութեան ծառայելու աննկուն կամքը, իր այն չափ սիրած ու յարգած հօրեղբոր՝ Յակոբ Սիմոնի կուսակցական գործիչի հանգամանքը, քիչ մը զարմանալի կը թուի, որ Հրաչը ընտրեց գիտական ասպարէզ ու դարձաւ քիմիագէտ:

Արդեօք հայ մտաւորականին եւ հայ հասարակական գործիչին հանդէպ մեր ընկերութեան ցուցաբերած վերաբերումին հակադրեցողութիւնն էր գիտական ճիւղի ընտրութիւնը, թէ իր մեծ հօր, դեղագործ-քիմիագէտ Սիմոն Օնպաշեանի օրինակն էր զինք գիտութեան մղողը, չեմ գիտեր:

Այդուհանդերձ, այս «չեղումը» երկար չտևեց, երբ աչքերով տկար, բայց մեր հասարակական կեանքի ամէնէն

ներուն հետեւանքով «քիչ հաւանական» կը գտնէ այս աշխատասիրութեան ամբողջացումը, սակայն ճանչնալով Հրաչի յամառութիւնն ու կամքը, անկարելի էր, որ ան տեղի տայ իր գործը կիսաւարտ ձգելու հրահրի մը, որչափ ալ բարձրէն գայ ան:

Կ'ուզեմ անդրադառնալ նաեւ հատորիկի մը, որ թերեւս երբեք նկատի չառնուի իրրեւ Հրաչի մտաւորական վաստակին մասին:

Խօսքս կը վերաբերի հաշուետուական այն գործիչներուն, գորս Հրաչը ամէն տարի կը կազմէր ու կը հրատարակէր ձեմարանի մասին: Այս գրքով կերտեց փաստն են ժողովուրդին առջեւ հաշուետու ըլլալու իր մղումին: Հրաչը, օրինակ այլոց, իր պարտականութիւնը կը համարէր հրապարակային հաշուետուութիւնը:

ՔՐԻՍՏԱՎՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆ

ԸՆԿԵՐ ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆԻ ՀԵՏ (Հատուած)

«Ձեմարան»-ի տնօրէնի իր նշանակումը դերին գործ չեղաւ: Բոլոր հարցերը իրենց լուծումը գտան. կը մնար իր համաձայնութիւնը: Ինք նախորդ տարին, 1967ին ընտրուած էր Բիւրոյի անդամ: Սկզբունքներու հաւատարիմ ընկեր, անյարմար կը գտնէր նոյն ատեն ձեմարանի տնօրէն ըլլալը: Մենք ալ նոյն սկզբունքներուն հաւատարիմ ընկերներ էինք, բայց այլ ընտրանք չունէինք: Ամառային օր մըն էր. հանգստեան տարթ. Արամ Պաղտասարեանի ամառանոցի տան պարտէզին մէջ երկար հանդիպում մը ունեցանք, տոքթէօրը եւ ես, Բիւրոյի ներկայացուցիչ ընկերով էստ: Քանի մը օր ետք կրցանք Հրաչ Տասնապետեանը հրաւիրել իր նոր պաշտօնին: Այդ օրերէն առաւել զարգացաւ մեր գործակցութիւնը, վասն բարգաւաճման ձեմարանի եւ «Համազգային»-ի: Ժողովներու ընկերացի Հրաչը յաճախ չէր խօսեր. երկար ալ չէր խօսեր, երբ նիւթը սպառելու մօտ ըլլար, կարճ նկատողութիւն մը կ'ընէր եւ հարցը իր տրամաբանական վախճանին հասած կ'ըլլար: Իրրեւ օրինակ, յիշեմ հետեւեալ պարագան: Որոշած էինք Պուրճ Համուտէն ոչ շատ հեռու տեղ մը ընդարձակ հողաչերտ մը գնել նոր ձեմարան մը կառուցելու համար: Երկար փնտրուեց: Առաջարկուեցաւ մեզի Պուրճ Համուտէն բաւական հեռու հողաչերտ մը: Գացի հողաչերտը տեսնելու: Կորսուած տեղ մըն էր. ճամբայ ալ չունէր, արահետ մը միայն. փոսի մէջ ինկած, շուրջը բլրակներ: Իմ աչքին որեւէ յարմարութիւն չունէր: Մանաւոր տէրերը 80էն 100 ժառանգորդներ էին, աշխարհացորիւ, մեծամասնութիւնը առանց փոխանորդագրի: Կատարեալ թնձուկ: Ես վճռականօրէն դէմ էի, սակայն կային ընկերներ, որոնք կը կարծէին թէ հո-

ղաչերտէն մաս մը, անմիջապէս վաճառելի, գնուելու պարագային, միւս ժառանգորդներու բաժինները կամաց-կամաց կրնայինք ձեռք անցնել: Ընկ. Հրաչ լուռ կը հետեւէր կարծիքներու փոխանակութեան: Ստիպուեցայ հարցնել թէ ինք ինչ կը խորհէ: «Ծովահայեաց չէ» ըսաւ: Հարցը փակուեցաւ: Ծաղկածոր - Մըզհէր - հողաչերտը «ծովահայեաց» էր: Գնեցինք:

Այս «ծովահայեաց»ը մեր ժողովներուն յաճախ կատակով ըսուած տարագում մը եղաւ...

Արտակարգօրէն աշխատասէր եւ արտագրող, իր վաստակը յատկանշող բոլոր մարդերուն մէջ եղաւ փայլուն. յարողագոյն:

Քալիֆորնիա հաստատուելէս ի վեր - 1985 - մինչեւ քանի մը տարի առաջ յաճախ հանդիպեցանք իրարու, յատկապէս գործակցելով «Համազգային»-ի աշխատանքներուն առիթով, Պէյրութի, Հայաստան կամ Ամերիկա: Ձեմ կրնար չլիչել, սակայն քանի մը տարի առաջ մեր մէկ հանդիպումը: Քալիֆորնիա եկած էր. քանի մը ժամով ազատ էր: Գացինք միասին ովկիանոսի ափին, ճաշարանի մը պատշգամբին նստեցանք դէմ դէմ: Դիմացին սքանչելի տեսարան. ծովախորշը, զրօսանաւեր, դիմացը կղզին, կենսութեան ժողովուրդը: Քանի մը ժամ մնացինք միասին: Այդ օր, հակառակ իր սովորութեան, անդադար խօսեցաւ:

Բագում էին իր մտահոգութիւնները, ուրախութիւնները եւ ցաւերը. հայրութեան, հայրենիքի եւ Հ. Յ. Դաշնակցութեան դիմադրուած դժուարութիւնները. խօսեցաւ երկար. երբեմն յուզուած, իրար լաւ կը հասկնայինք. սրտերը քիչ մը թեթեւեցած՝ հասանք տուն:

Անկէ ետք, քանի մը անգամ հանդի-



պեցանք զանազան ժողովներու առիթով: Վերջին անգամին արդէն հիւանդ էր: Ափսոս... Թոքերէն մէկը հանուած էր արդէն. սակայն սիկաւոր անպակաս էր շրթներէն:

Մեր այս երկար տասնամեակներու գործակցութիւնը եղաւ սերտ, սիրալիր: Նոյն գաղափարական գիտնորներ էինք, նոյն աշխարհահայեացքով եւ մօտաւորապէս նոյն աշխատանքով: Ինքը լուռ, ես՝ արագ, իրար լաւ կը հասկնայինք: Ի հարկէ բնական է որ այսքան երկար տարիներու ընթացքին երբեմն եղան հարցեր, որոնց շուրջ տարակարծիք եղանք, շատ բնական է այդ, հակառակը անբնական պիտի ըլլար:

Միշտ սակայն փոխադարձ սէրն ու յարգանքը մնացին ամբողջական:

Իր ինքնակենսագրութեան մէջ, թուելէ ետք իր հեղինակութիւններու երկար շարքը, խօսքը կ'աւարտէ ըսելով՝ «Առայժմ այսքան»: Ափսոս... «Առայժմ այսքան»ը մնաց այդպէս: Թէեւ ունի պատկառելի քանակութեամբ եւ սքանչելի որակով հրատարակելի գործեր:

Յետ եղեւնեան Սփիւռքի եւ յետ եղեւնեան Հ. Յ. Դաշնակցութեան ամենարժանաւոր գաւակներէն մէկը եղաւ:

ՏԱԳԹ. ԵՂԻԿ ԳՈՆԵԱԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԱԿՆԱՐԿ

ԵՐԲ ԲՈՂՈՐ ՃԱՄԲԱՆԵՐԸ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՏԱՆԻՆ...

Մարիա տեղեկատուական արհեստագիտութեան նուիրուած յօդուածներ ստորագրող գերմանացի լրագրողուհի մըն է: Քանի մը շաբաթ առաջ իր ներկայացուցած նիւթերէն մեկուն մասին յաւելեալ տեղեկութիւն խնդրելու համար Ե-ճամակ մը ուղարկած էինք անոր: Մարիա շատ չանցած ուղարկեց աղբիւրներու եւ «կապ»երու ցանկ մը, որմէ ետք պարբերաբար սկսանք համացանցով գրուցել իրարու հետ: Ան կը պատմէր իր կատարած լրատուութիւններուն եւ պատրաստած ուսումնասիրական յօդուածներուն մասին, մինչ մենք «Ազդակ»ի տեղեկատուական արհեստագիտութեան էջին կարգ մը յօդուածներուն անդրադառնալու պատրուակով կը փորձէինք անոր ներկայացնել Հայկական Յեղասպանութիւնն ու Հայ Դատը:

Անցեալ Չորեքշաբթի, երբ Մարիային յանձնարարեցինք կարդալ www.armenocide.de կայքին մէջ տեղադրուած Հայկական Յեղասպանութեան մասին գերմանական պետական արխիւները, մանկիցս պէս հարց տուաւ, քի արհեստագիտութեան նուիրուած էջին մէջ նմանօրինակ նիւթերու յանա՞խ տեղ կու տանք: Գեր դրական պատասխանին յաջորդեց անոր պարմացական հարցադրումը՝ «Արհեստավարժօրէն նման բաներու մասին պէտք է խօսուի թերթի մը քաղաքական էջերուն մէջ եւ ոչ թէ արհեստագիտութեան էջին մէջ, չե՞ս կարծեր...»:

Հարկ է ընդունիլ, որ «արհեստավարժ» մօտեցումով կատարուած այս նշումը արդարաբար է: Այո, «արհեստավարժ» յօդուածագիրը քաջ գիտէ թէ տպագրի մամուլին մէջ գրութիւնները կը դասաւորուին ըստ նիւթի, եւ թէ Յեղասպանութեան կարելի չէ կրկին ու կրկին անդրադառնալ արհեստագիտութեան յատկացած էջով:

Սակայն տրամաբանութեան վեր արհաւիրքի մը Յեղասպանութեան ենթարկուած ժողովուրդին հաւաքական յիշողութիւնը կարելի չէ սեղմել գուռ սոսկ քաղաքական պարունակի մէջ:

Այդ հաւաքական յիշողութիւնը կ'արտացոլայ հայու առօրեային բոլոր մարգերուն վրայ: Եւ հայը, պահանջատէր հայը, արհեստն ու արուեստը, նոյնի սկ արհեստագիտութիւնը, կը ծանայցնէ իր դատին:


«Արհեստավարժ» «ուղիղ տրամաբանութեամբ» մօտեցումը, որ ձիւրօրէն կը բաշխուի այլ ժողովուրդներու, մերք «յիւրա» ու փարթաւութիւն է միայն դատ ունեցող ժողովուրդին:

Այո, արհեստավարժ մօտեցումով է միայն, որ կարելի է դատ մը միջազգային հանրութեան ներկայացնել եւ դատը շահիլ, սակայն հաւաքական յիշողութեան պահպանումը, ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի մը սերունդը բնական յանձնառութիւնը ամէն օր եւ ամէն լը պարելով եւ արտայայտելով դատի տերերը կանգնած կրնան մնալ:

Յեղասպանութեան ենթարկուած ժողովուրդին համար բոլոր ճամբաները պահանջատիրութիւն կը տանին...

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՐՏԵՐՈՒ ԼԵՏԱԳՐՔՐԱԿԱՆ ԿԱՅՔ ՄԸ՝ «ՓԼՐՃԷՔԹ ԿՐԻԹԻՆԿԸ»



Համացանցի միջոցով ձրօրէն ելեկտրոնային քարտեր ուղարկելու կարելիութիւնը ընծայող կայքերուն մէջ իր յատուկ տեղը ունի www.perfectgreetings.com հասցէով կայքը՝ շնորհիւ տարբեր առիթներու նուիրուած բազմաճարտ քարտեր հաշուող իր հաւաքածոյին:

«Փերֆէքթ Կրիթինկզ» կայքի քարտերէն ումանք շարժուն գծանկարներ են, ուրիշներ՝ լուսանկարներ, սակայն քարտերուն մեծ մասը կը յատկանշուի իր իւրայատուկութեամբ եւ գեղեցկութեամբ:

Քարտերը զասակարգուած են ըստ իրենց խորհրդանշան առիթներուն:


Փերֆէքթ Կրիթինկզ կայքի քարտերէն ումանք շարժուն գծանկարներ են, ուրիշներ՝ լուսանկարներ, սակայն քարտերուն մեծ մասը կը յատկանշուի իր իւրայատուկութեամբ եւ գեղեցկութեամբ:

Քարտերը զասակարգուած են ըստ իրենց խորհրդանշան առիթներուն:

ՆԱՄԱԿԻ ԾՐԱՐԵՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՍՑԵՆԵՐ

Ումանց Համար նամակի ծրարին կազմող թուղթի կտոր, ուրիշներու համար գուրգուրանքի առարկայ դրոշմաթուղթը, որուն աւանդաբար կը հանդիպէինք հարգատի մը ուղարկած նամակի ծրարին վրայ կամ դրոշմաթուղթի սիրահարի մը հաւաքածոյին մէջ, այսօր կարելի է գտնել նաեւ Համացանցին վրայ:

Ձանազան երկիրներու հրապարակած դրոշմաթուղթերու նուիրուած կայքերու կարգին, կը հանդիպէինք նաեւ Հայկական դրոշմաթուղթեր ներկայացնող խումբի մը կայքերու, գործ կը



դրոշմաթուղթեր: Կայքին մէջ յատուկ բաժին մը տրամադրուած է Հայկական դրոշմաթուղթերու: www.philnet.fr/eng/cyber/armenia/



ներկայացնենք ստորեւ: www.armenianstamps.com/index.html հասցէով այս բաժինը կը ներկայացնէ 1992-1993 տարիներուն հրապարակուած շուրջ ճառքի «Ֆիլիթ» ընկերութիւնը իր կայքին մէջ կը ցուցադրէ գանազան երկիրներու հազարաւոր

թուղթի մասին տեղեկութիւններ:

● Հայութեան հետ առնչուող դրոշմաթուղթեր հրապարակուած են նաեւ աշխարհի գանազան կողմերը՝ Արժանթին, Եւրոպա, Միջին Արեւելք եւ Ճափոն: Այս դրոշմաթուղթերուն մասին տեղեկութիւններ ներկայացուած են «Կրիթիկա» կայքին www.cilicia.com/armo-stamps-worldwide.html հասցէով բաժինին մէջ:

Նոյն կայքին www.cilicia.com.armo-stamps-1918-1922.html հասցէով բաժինին մէջ ներկայացուած են Հայաստանի Ա. Հանրապետութեան, ինչպէս նաեւ խորհրդայնացումի առաջին տարիներուն հրապարակուած Հայկական դրոշմաթուղթերը:

● Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դրոշմաթուղթերուն լուսանկարները, հրապարակման թուականները եւ յաւելեալ մանրամասնութիւններ ներկայացուած են www.armenianstamps.com կայքին մէջ: Նոյն այս ժամանակաշրջանի հայաստանեան դրոշմաթուղթերուն մասին տեղեկութիւններ կը փոխանցէ նաեւ www.philately.com/armenia.html կայքը:

● Հայկական դրոշմաթուղթերու մասին տեղեկութիւններ փոխանցող լուսագոյն կայքը կը մնայ Հայաստանի փոխադրամիջոցներու եւ հաղորդակցութեան նախարարութեան «Հայկական նամականիշեր» կայքը (www.iatp.am/stamps), ուր ներկայացուած են 1992էն 2001 տարիներու Հայաստանի դրոշմաթուղթերուն նկարները, լրացուցիչ տեղեկութիւններով:

● Հայկական դրոշմաթուղթերու նուիրուած կայքերու շարքին յիշենք նաեւ www.armenianstamp.com եւ www.russiannetwork.com/arm-stamps.html հասցէով կայքերը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կը յայտարարենք հաւատացեալ մեր ժողովուրդին, թէ Կիրակի, 17 Մարտ 2002, Կաթողիկոսարանի Ուխտի Օրն է:

Այդ օրը թեմիս եկեղեցիներուն մէջ Ս. պատարագն ու հոգեմասնատեան արարողութիւնը պիտի աւարտին ժամը 10:30ին: Եկեղեցիներէն ժամը 10:30ին պատարագը, ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ մասնակցելու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա. Աջով եւ այլ մասունքներով կազմուած հանդիսաւոր թափօրին՝

Բարձր հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ խումբերամ փութալու մայրավանք եւ հաղորդուելու օրուան հոգեպարար խորհուրդով:

- Փոխադրութիւն հետեւեալ վայրերէն
1. Թրատ - Ս. Աստուածածին եկեղեցի
 2. Նոր Մարաշ - Ս. Բառասնից Սանկանց
 3. Նորաշեն - Ս. Կարոյանց եկեղեցի
 4. Ֆանար - Ալուսինի առջեւէն
 5. Ռաուտա - Մարտի մօտէն
 6. Նոր Սիւ - Ս. Սարգիս եկեղեցի
 7. Էջրեֆիտ - Ս. Յակոբ եկեղեցի
 8. Որմէյլ - Ս. Յարութիւն եկեղեցի
 9. Նոր Էաճըն - Ս. Գեորգ եկեղեցի
 10. Եայաշեն - Ս. Յովհաննու Կարապետ
- ԿՐՈՍԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԷՆ ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐ

ՀԱՏԿՈՒԱՆ ՊԱԶԱՐ

Կը վաճառուի Ձատկուան գարդարանք, խմիչք, Ծաղկազարդի մօմ, շորջուր, համադամ եւ իւրայատուկ ճաշեր եւ անուշեղեններ, ինչպէս նաեւ՝ յուշանուէրներ եւ այլ տեսակի նուէրներ:

Տեղի կ'ունենայ 21 եւ 22 Մարտ 2002ին, «Սիրան Մանուկեան» սրահին մէջ:

Պազարը բաց է ժամը 11:00էն 16:00:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ՝ «ԿԱՐԱՎԱՆ» ԾՐԱԳԻՐԸ




2002ի աշնան արուեստի աննախընթաց ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ Քալիֆորնիոյ մէջ: Միջնադարեան հայ մանրանկարչութեան ներշնչուած, տասնչորս հսկայական գեղանկարներ, հանրային եօթը փոխադրակառքերու վրայ բեռցուած պիտի շրջին Քալիֆորնիոյ մայրուղիներուն ու փողոցներուն մէջ: Միջնադարեան հայ մանրանկարչութիւնը հանրութեան ներկայացնող այս իւրայատուկ նախաձեռնութիւնը ծրագրած եւ գեղանկարներէն 12ը պատրաստած է հայրենի արուեստագէտ Ձատիկ Ձատիկեան: Երկու գեղանկար պատրաստած է ամերիկահայ արուեստագէտ Չարլզ Կարապետեան:

«Կարաւան» անունով այս ծրագիրին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար կարելի է այցելել www.caravanproject.com հասցէով կայքը, ուր ներկայացուած են վերոնշեալ երկու արուեստագէտներուն կենսագրականները, փոխադրակառքերուն վրայ տեղադրուած գեղանկարներուն պատկերները եւ մշակութային այս իւրայատուկ նախաձեռնութեան առնչուող այլ մանրամասնութիւններ:

Յառաջիկային կայքին մէջ պիտի տեղադրուի նաեւ յատուկ տեսահիմն մը, որ պիտի ներկայացնէ այս շարժուն ցուցահանդէսին ընթացքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՆՈՎԸՐԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ



13 - 20 Մարտ, Գերմանիոյ Հանովըր քաղաքը կը հիւրընկալէ իր աւանդական ցուցահանդէսը, որ տեղեկատուական արհեստագիտութեան նուիրուած աշխարհի մեծագոյն փառատօնը կը նկատուի:

Այս տարի, ցուցահանդէսին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 58 երկիրներէ 8152 ընկերութիւններ, որոնք պիտի ներկայացնեն արհեստագիտութեան նորագոյն նուաճումները:

«Սեպտեմբեր 2002» փառատօնին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ Հայաստանեան «Միկմա» եւ «Ալկորիթմ Սըրվիս» ընկերութիւնները:

Նիւթակազմի դեմոստրացիան պատճառով Հայկական շարք մը այլ ընկերութիւններ յետս կոչած են փառատօնին իրենց մասնակցութիւնը:

Նշենք, որ անցեալ տարուան փառատօնին Հայաստանէն իրենց մասնակցութիւնը բերած էին 7 ընկերութիւններ:

Ցուցահանդէս - փառատօնին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելել www.cebit.de հասցէով կայքը:

Պատրաստեց՝ Խ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման բուսակազմէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՂԻՇԷՆ ԵՂԻՇԷՆ ԺԱՄԸ 5:00:


ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Մանկապատանեկան

ԴԻՊԻ ԱՆՎԵՐՋ ՏԻԵՉԵՐՔ

ԻՆՉՈՒՒ ՄԵՆԵ ԿՎՊՐԻՆԵ ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻՆ ԿՐԱՅ ԵՒ ՈՉ՝ ՈՒՐԻՉ ՄՈՒՈՐԱԿԻ ՄԵ ԿՐԱՅ

Տակաւին աւելի հանգստաւէտ մոլորակ մը չէ գտնուած: Երկրագունդը արեգակնային զոտութեան միակ մոլորակն է, որ ունի հոսոող ջուր, շնչելի մթնոլորտ եւ հաճելի ֆերմաստիճան, ո՛չ շատ տաք, ո՛չ շատ ցուրտ: Ան ունի բոլոր առաւելութիւնները՝ ընդունելի կեանքի մը համար:



ունեցաւ 1957ին: Իր «Մփոթնիքին» մէջ պահուած անհամ երկրագունդին շուրջը դարձաւ եւ սատկեցաւ ճամբորդութեան ընթացքին: Այս առաջին ճամբորդութեան ի վեր ուրիշ անասուններ յաճախ կը կատարեն նման ճամբորդութիւններ: Այս ձեւով կապիկներ, ձուկեր, որդեր... ուղարկուած են անջրպետ:

ԻՆՉՊԵՍ ՄՈՒՈՐԱԿՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ ԿԸ ՄԵԱՆ ԱՆՋՐՊԵՏԻՆ ՄԵՋ

Անոնք անդադար իրենց վրայ եւ արեւուն շուրջ կը դառնան: Անոնք որքան արեւուն մօտ գտնուին, այնքան ստիպուած են արագ դառնալու: Անոնք հաւերթաձեւ գիծով կը դառնան օրուան աստղին շուրջ: արեւը զանոնք ղէպի իրեն կը քաշէ, մինչ իրենց շարժումին յառաջացած ուժը զիրենք ղէպի դուրս կը հրէ:

պի դուրս կը հրէ: Այս գործունէութիւնն է, որ անոնց հաւասարակշռութիւնը կը պահէ եւ անոնց արգելք կ'ըլլայ գլորուելու ղէպի արեւ:

ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՆԱՍՈՒՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼ ԱՆՋՐՊԵՏ

Այո՛, սակայն նախ պէտք է զանոնք ղնել անջրպետանաւու մը մէջ: Դէպի անջրպետ ուղարկուած առաջին անասունը ռուս շնիկ մըն էր, Լայ-բա: Այս տարօրինակ ճամբորդութիւնը տեղի

ԻՆՉՈՒՒ ԹՈՒՆԱՍԻՆ ԶԿԱՅ ԱՆՋՐՊԵՏԻՆ ՄԵՋ

Թթուածինը պահելու համար պէտք է որ երկնային մարմին մը, օրինակի համար՝ միջակ չափով մոլորակ մը զայն իրեն քաշէ ամբողջ իր քաղցրահամ ուժով: Այլապէս, ան կը ցրուի... Մոլորակներուն միջեւ գտնուող տարածութիւնը պարզապէս ըլլալով՝ ան չի կրնար օդի կամ թթուածինի որեւէ քանակ իր մէջ պահել:

ԱՅԼԱԶԱՆ

ԻՆՉ ԸՐԱՏ Է ՄԱԺԵԼԼԱՆ

Ան նաւարկութեամբ գրադած է: Մաթեյան եւ-



լուպայէն ճամբայ ելած է 1520 թուականին եւ աշխարհը շրջած է: Ան եղած է առաջին անձը, որ գտած է Ատլանտեան Ովկիանոսին եւ Խաղաղական Ովկիանոսին միջեւ նաւարկելի անցք մը, հարաւային Ամերիկայի

ձայրագոյն հարաւը: Այդ թուականէն ի վեր ծովային այս ճամբան կը կրէ Մաթեյանի նեղուց անունը:

ՈՋՆԻՆԵՐԸ ԿՐԱՆՆ ՑԱՍԿԵԼ



Այո՛, գորտերու նման: Անշուշտ ոգնին չունի ազեպազի մը ճկունութիւնը կամ լուի մը թեթե-

ւութիւնը... Սակայն եթէ ան պէտք ունենայ պատ մը կամ ցանկապատ մը մագլցելու, փուշերու այս զնդակը կրնայ գորտերու նման փոքր ոտուկներ կատարել:

ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇԻՆՈՒԻ ԿԱՇԻՆ



Անասուններու մորթով: Կաշի շինելու համար մենք պէտք ունինք կովու, ձիու, այծի կամ կոկորդիլոսի մը մորթին:

- 1) Զայն կը լուանք մագլցելու եւ աղտոտութիւններէն մաքրելու համար:
- 2) Կը ծածկենք կեղեւափոշիով, որ պէսզի չփոխ:
- 3) Կը փափկացնենք ոլորելով:
- 4) Կը ներկենք, եթէ հարկ է:
- 5) Կը չորցնենք: Կաշին պատրաստ կ'ըլլայ:

ԿՈՒՉՈՒԻՆ

● Աղանձնաշար փորձառու գործաւորներ: Հեռ. 03-954741:



all kinds of diamonds and colored stones semiprecious, synthetic and quarts
Permanoukian est.
founded in 1948
Bouij-Hamoud, Armenia str., near Clarion Tel.: 01-260768

ՉԵՈՒՅԻՆ ԱՅՆԱՍԱՆԵ

ՆԱՊԱՍՏԱԿ ՄԸ ՇԻՆԵՆՔ






ԱՃ ՈՒՆԻ ԵՐԿԱՐ ԵՒ ՍՈՐ ՎԿԱՆՉՆԵՐ, ԴՈՐՍ ԻՆՃԱԾ ԵՐԿՐԱՎԿՈՒՆԵՐ ԵՒ չափ չը սիրէ ստեպղիմ կրծել... Ո՞վ է ան: Նապաստակը:

ՊԵՏՔ ՈՒՆԻՍ


Մետաղէ 3 կախիչի, ճերմակ խէժի, խաւաքարտի պղտիկ կտորի մը, մէկ հաստ վրձինի, թերթերու, ճերմակ, կապոյտ, սրճագոյն, կարմիր ջրաներկի, բարակ վրձինի մը, 6 ատամնակրկիտի, գունաւոր ժապաւէնի մը, կերպրկալէ պղտիկ ամանի մը (օրինակ՝ մածուկի տուփ մը), խցանի մը, մկրատի, հաստ սրճագոյն փակցնելիք երկրի:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՆ

1) Ճերմակ խէժը քիչ մը խառնէ ջուրով:



2) Կլորակ գլուխը պատրաստելու համար չափահասէ մը խնդրէ, որ քեզի օգնէ եւ կախիչը բանայ, ինչպէս որ նշուած է նկարին մէջ:



3) Նապաստակին առջեւ թաթերը պատրաստելու համար երկրորդ կախիչին մէկ ծայրը դրան մէջ դիր եւ զայն ղէպի քեզի քաշէ՝ ծռելու համար: Միւս կողմն այնչէս ձեւով ծռէ:

4) Դունչին համար կախիչին ճանկին բաժինը ղէպի առջեւ ծռէ:

5) Ետեւի ոտքերուն

5

6

7

8

9

10

11

ՏՕՆԵՐ ԵՒ ՄՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՈՒՆ ՄՈՂԱԼԼԱ

Մարտ ամսուն սիւսերը կը տօնեն Հոյա Մոհալլան, իսկ հինտունները՝ Հոյին, նշելու համար Գարնան գալուստը: Անոնք իրարու վրայ կը թափեն գունաւոր ջուր՝ կուլլալ:

Առաջին Հոյա Մոհալլան տեղի ունեցած է Անանտփուրի մէջ, երբ երկրորդ կուրուն, 17րդ դարու վերջաւորութեան, կեղծ պատերազմներ մղեց իր բանակներուն ուժը ցոյց տալու համար: Այժմ, բազմաթիւ օրեր տեւող տօնին ընթացքին, սիւսերը ուրախութեան կրակներ կը վառեն եւ մարզական խաղեր կը կազմակերպեն: Վերջին օրը անոնք կ'երթան կուրտուս կոչուած տաճարը, ապա իրարու հետ կը բաժնուին սուրբ ուտելիքը՝ հարա փարշաւը:


ԻՍԿ ՍՊԱՆԻՈՅ ՄԵՋ...

Սպանիոյ վալենսիա քաղաքին մէջ Մարտի երկրորդ շաբաթը տեղի կ'ունենան Սուրբ Յովսէփի նուիրուած տօներ (Լաս Ֆայաս): Տողանցքներ եւ հրախաղեր կը կատարուին գրեթէ անդադար: Մարտիկ կը շինեն փափիէ մաշեով հսկայական արձաններ, անոնց մէջ պայթուցիկներ կը գետեղեն եւ սողանցքին վերջին օրը զանոնք կը պայթեցնեն:


ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար փաշտօնակալ թուղթի վրայ, եւս հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

Ժ Ա Մ Ա Ն Ց




Կրնա՞ս իւրաքանչիւր գրասալոյցիկի ցոյց տալ իրեն յարմարող ճամբան:



Կրնա՞ս այս բանակալայրը բաժնել 6 ուղիղ գիծերով, այնպէս մը, որ իւրաքանչիւր վրանի ջուր գտնուի երեք ծառ:



Կրնա՞ս գտնել կօշիկին համապատասխանող շուքը:



Ալիսին վանդակին մէջ մնացած է մէկ թռչուն: Ո՞ր պահուրտած են մնացեալ ինքն թռչունները:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

ՕՓԷՔ

ՔԱՐԻՒՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԱԶՈՒՄ

ՎԻԵՆՆԱ, 15 (ՌՈՅԹԸՐԸ)։ ՕՓԷՔ որոշեց քարիւղի արտադրութիւնը երեք ամսուան համար նուազեցնել, որպէսզի քարիւղ ներածուի երկիրները պահանջները բարձրացնել 225-ի 28 տոյարի և սպասել համաշխարհային տնտեսական վերականգնումին, աւելցնելու համար քարիւղի պահանջը:

«Քարիւղի սակը արդէն իսկ նուազում արձանագրած է, բայց կը յուսանք, որ անհկա բարձրանայ տնտեսութեան բարելաւումով», յայտնեց Վենեկուելայի քարիւղի նախարար Ալվարո Սիլվա:

Վերջին շաբաթներուն քարիւղին սակը բարձրացում արձանագրած է իբրէս արդիւնք համաշխարհային տնտեսութեան վերվայրումներուն, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու կողմէ ՕՓԷՔի անդամ Իրաքը ուժակոծելու իբրէս վախի արդիւնք:

«ՕՓԷՔ պէտք է հաւասարակշռուած պահէ քարիւղի արտադրութեան գործընթացը, որպէսզի կարենայ քարիւղի իւրաքանչիւր տակառին սակը անփոփոխ պահել: Սակայն պատմութիւնը կը վկայէ, որ երբ տնտեսութիւնը խախտի եւ քարիւղի պահանջը աւելնայ ինքնաբերաբար սակը բարձրացում կ'արձանագրէ», ըսաւ Նիւ Եորքի ՓԻՐՄ ուսմանիւթի ընկերութեան խորհուրդի անդամ Կերի Ռոու:

ԳԵՐՄԱՆԻԱ ...

Շարունակուած 3րդ էջէն

մասին, որ ըսուած է նախագահի մը կողմէ, որ եթէ ինքզինք յարգէր՝ այդպիսի բան չէր ըսեր:

● ՍՈՒՐԻՆՈՅ նախագահ Պաշտար Ասատ ընդունեց այցելութիւնը իրաքցի քիւրտ ղեկավար Ժալալ Թալապանիի, քննարկելու համար Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը ծրագիրը: Թալապանի դէմ է ամերիկեան յարձակումի մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՀԱՅ ԳՊՐՈՅԸ...

Շարունակուած 2րդ էջէն

րու միջեւ: «Օտար վարժարաններ ունին այնպիսի առաւելութիւններ, որոնք կրնան գայթակղեցնել բոլորը: Անուցումով կարելի է օժտել հայ դպրոցը, որ սակայն, իր բոլոր տկար կողմերով ունի բան մը, ինչ որ օտար վարժարանը բնաւ չի կրնար ունենալ», ըսաւ ան:

Վեր առնելով հայ դպրոցին առաւելութիւնը՝ Ա. Իւրնէշլեան եզրակացուց, որ հայ դպրոցը պարտաւոր է, ուր կը կոփուին հայապահպանման պայքարին մասակցող մարտիկները:

«Ի՞նչ կ'ակնկալենք հայ դպրոցէն» հարցադրումը ներկայացուց Հրաչ Գարամանուկեան, որ ծնողքի տեսանկյունէն կերտողացաւ հայկական դպրոցներու առաւելութիւններուն եւ նշեց անոնց անպատեհութիւնները, ինչպէս՝ օտար լեզուներու իւրացման համեմատական տկարութիւն, ոչ տիպար մանկապարտէսներ, արտադասարանային աշխատանքներու պակաս, գնահատանքի նոր ձեւերու օգտագործման պակաս, որոնք կարելի է եւ անհրաժեշտ է կիրարկել: Ան բացատրեց աշակերտին ուսումնական ընթացքը հայերէն դասանիւթերով ծանրաբեռնելու վարկածը եւ շեշտեց, որ հայկական դպրոցներէ շրջանաւարտները կ'ունենան համալսարանական ուսման փայլուն շրջան:

Ապա խօսք առաւ Նորա Միլիսեան, որ բաղդատական կատարեց հայ եւ օտար վարժարաններու միջեւ:

Շեշտելով հանդերձ հայկական վարժարաններու անփոխարինելիութիւնը, ան ներկայացուց անոնց տկար կէտերը եւ կատարեց պատմական արժեքներու ցուցանիքներ:

Սեպուհ Մխչեան խօսելով հայ դպրոցին առաւելութիւններուն մասին պայն էական նկատեց պագային արժեքներու տէր կանգնող սերունդներ ունենալու համար:

Ան ներկայացուց հայ դպրոցը օտար դպրոցներէն դրական կերպով պատրոշող ապագաներ: Այսպէս՝ հայ ուսուցիչը, ի տարբերութիւն օտարին, աշակերտին հանդէպ ունի հարապատի հոգածութիւն: Հայկական դպրոցներուն մէջ կը պահպանուին ընկերային եւ բարոյական արժեքները: Եւ մասնաւոր՝ հայկական վարժարանը կը հանդիսանայ հայ աշակերտը թմբեցուցիչի եւ ոգելից ըմպելիներու գործածութեան, բնութիւններէ, պատանիները եւ երիտասարդները կլանող աղանդներու ապրեցուցիչներէ վերջ պահող միջավայր:

Ապա շուրջ մէկ ժամ տեւողութեամբ ներկայները արծարծեցին նիւթին առնչուող հարցեր, արտայայտեցին գաղափարներ եւ ներկայացուցին իրենց առաջարկները:

ՃԱՏՐԱԿԻ ԽՆԳԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

- 1. 1...xg6+ 2. օh5 xg5# 0-1
2. 1. օxf6+ օf8 2. xg7# 1-0
3. 1. օf6+ օf8 2. xg7# 1-0
4. 1. xg7+ օh8 2. օxf8# 1-0
5. 1...xre2+ 2. օxe2 օxe2# 0-1

ՄԻԼՈՇԵՒԻՉԻ ԴԵՄ ԿԿԱՅՈՒԹԻՒՆ

1. Ա < է 3, 15 (ՌՈՅԹԸՐԸ)։ Պատերազմային ուժերը միմյանց զուգահեռ վարժարաններու մէջ Ուրբաթ օրուան նիստին Պայքաններու մէջ Բրիտանիոյ պատուիրակ Փետի Էշտուն Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպոուան Միլոշեւիչի դէմ վկայեց, ատենին յայտնելով, որ Միլոշեւիչ անտեսած է իրեն ուղղուած պոզիտիւնները եւ շարունակած քաղաքական եւ սեփական վարչապետ գործածել եւ ճնշում բանեցնել Քոսովոյի վրայ:

Էշտուն նշեց, որ ինք 1993ին Պեկրատի մէջ դէմ յանդիման եկած է Միլոշեւիչի հետ եւ պայն պոզիտիւնները, թէ օր մը իր գործած պատերազմային ուժերուն՝ Քոսովոյի քաղաքայիններու սպանդին համար հաշիւ պիտի պահանջուի իրմէ, հե-

տեւարար ան վերջ պետք է տայ վարչապետին:

«Յստակ կերպով քեզի թելադրեցի, որ եթէ շարունակեալ շարունակեալ ընթացք միջազգային ընտանիքը անպայման հաշիւ պիտի պահանջէ քեզմէ եւ ըստ այնմ քայլերու պիտի դիմէ», ըսաւ Էշտուն դատավարութեան ընթացքին:

Երեկուան դատավարութեան ընթացքին Միլոշեւիչ, որ ինքզինք կը պաշտպանէ, միջամտած է եւ մեղադրած ՕՓՄՆը եւ Քոսովոյի Այատար գրութեան Բանակը հարաւային Սերպիայէն քաղաքայինները բռնազաղթի ենթարկած ըլլալու յանցանքով:

ԵՈՒԿՈՍԼԱՎԻՈՅ ՄԵՋՉԵՐԱԿԱԼՈՒՄՆԵՐ

Եուկոսլաւիա երեկ ձերբակալեց ամերիկացի դիւանագետ մը:

«ՄԱՏԵԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ» ...

Շարունակուած 2րդ էջէն

սարգիսեան, ինչպէս նաեւ ազգային միութիւններու եւ կապիտալիզմի ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան ետք, ձեռնարկին բացումը կատարեց Հ. Կ. Ա. Մի հոգեւոր վարիչ Անդրանիկ Ծ. վրդ. Կոստանեան, որ ըսաւ,

թէ այս յորելենական ձեռնարկը փաստ մըն է, որ հակառակ ժամանակին, «Մատեան Ողբերգութեան» ը տակաւին կենդանի է եւ իւրաքանչիւ արժեք կը ներկայացնէ հայութեան համար: Ան նշեց, թէ «Նարեկ»ը թէեւ գիտութեան գիրք է, եւ որեւէ կայ չունի նորագոյն արհեստագիտական պարզացումներուն հետ, սակայն անհկա բնաւ չէ կորսնցուցած իր արժեքը, որովհետեւ անժամանակ երկխօսութիւն մըն է մարդուն եւ Աստուծոյ միջեւ:

Ապա Հուրի Տէր Գեորգեան եւ Վարդան Քիրայեան ներկայացուցին Մեարդակ Հայտնիի «Մատեան հայարամեակին»ը, ուր շեշտուած է այն իրողութիւնը, թէ հակառակ անցնող հայար տարիներուն ընթացքին արձանագրուած դէպքերուն եւ իրադարձութիւններուն, տակաւին «Նարեկ»ը կը մնայ անգնատեղի գանձ մը, իսկ Նարեկացիին՝ հայ աշխարհի փառքի երգիչը:

Գեղարուեստական բաժնիով յաջորդաբար հանդէս եկան Ռիթա Սաղպապարեան, որ մենեդժեր «Տիրամայր» եւ «Հայրենի կարօտ» կտորները, դաշնակի ընկերակցութեամբ՝ Յասմիկ Գասպարեանի, եւ Յակոբ Թալաքիանեան ու Մովսէս Տէր Գեորգեան, որոնք ջութակի եւ դաշնակի վրայ մեկնաբանեցին «Ձառուն, հաւուն»ը եւ «Օրեր»ը: Օրուն բանաստեղծ էր Մեարդակ վրդ. Թովայեան: Ան «Մատ-

եան Ողբերգութեան»էն մէջքերումներ կատարելով ըսաւ, թէ Նարեկացի գիրքը գրած է դարերուն ի հեռուկա մնալու եւ գոյատեւելու նպատակով:

Բանաստեղծ, ամփոփ ձեւով Գրիգոր Նարեկացիի կենսագրութիւնը ներկայացրեցին եւս, անդրադարձաւ «Մատեան Ողբերգութեան» գիրքին եւ անոր յատկանիշներուն: Ան ըսաւ, թէ «Նարեկ»ը ունի 6 զլիսաւոր վերատառութիւններ եւ անդրադարձաւ «Նարեկ»ը իր լեզուի, խորքի, ունի մտքի խորնաբանութեան

պատճառով, հայ աշխարհի միակ երկն է, որ ունեցած է շատ վերածանումներ եւ թարգմանութիւններ, ըսաւ բանաստեղծը: Ան աւելցուց, թէ պէտք է հաստատել, թէ Նարեկացի իր մտածումը, աղօթքը վերածած է տաղի, քերթումի եւ ով որ չի գիտեր մատեանին արժեքը, ուրեմն ծանօթ չէ անոր խորքին:

Բանաստեղծը հաստատեց, թէ գիրքին ձամբով արտայայտուած գոյատեւելու եւ կենդանի մնալու Նարեկացիի փափաքը իսկապէս իրականացած է:

Բանաստեղծութեան ետք, Մարինա Սամպեան ներկայացուց «Նարեկ»ի, Բան 2-ն, որմէ ետք Հայ Կաթողիկէ Համալսարանական Միութեան նախաձեռնութեամբ յուշանուէր մը յանձնուեցաւ «Նարեկ»ի թարգմանիչ Սահակ վրդ. Քէշիշեանի:

Փակման խօսքը կատարեց Վարդան եպ. Աշաբեան, որ ըսաւ, թէ կան գիրքեր, որոնք նոր հորիզոններ կը բանան եւ որոշ անգնահատելի եւ իւրացատու են ու աւելցուց, թէ «Նարեկ»ը այդ գիրքերուն շարքին է: Ան նշեց, թէ Նարեկացիի գիրքը դարձեւ մաշեցող գիրք է եւ արտայայտութիւն է տիեզերքի եւ բնութեան անհրաժեշտ բոլոր արժեքներուն:

Ձեռնարկէն ետք տեղի ունեցաւ Մեարդակ վրդ. Թովայեանի նորատպ «Նարեկեան որոնումներ» գիրքի մակագրութիւնը:

որ սերպ կառավարական պաշտօնատարի մը հետ հանդիպում կ'ունենար ճաշարանի մը մէջ, յայտնեց Եուկոսլաւիոյ մէջ ամերիկեան դեսպանատան բանբերը: Ամերիկացի դիւանագետը ձերբակալուած էր 15 ժամուան համար եւ սպա պատ արձակուած:

Ձերբակալուեցաւ նաեւ Սերպիոյ փոխ վարչապետ Մովսիլ Փերիսիչ, որ Միլոշեւիչի նախագահութեան շրջանին բանակի հրամանատար եղած է:

Տեղական աղբիւրներ որեւէ յատկացում չեն կատարած, թէ ամերիկացի դիւանագետը Փերիսիչի հետ հանդիպում կ'ունենար, թէ այլ անհատի մը հետ:

Փերիսիչ տակաւին կը մնայ արգելափակուած:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5101 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for the 5101 crossword puzzle.

Table with 2 columns: ԵՐՈՒՆԴՆԱԿԱՆ (Clues) and ՈՒՂԱԿԱՆՅԵԱՑ (Answers) for the 5101 crossword puzzle.

Table with 11 columns and 11 rows for the 5100 crossword puzzle.

ԽՍՐԱՅԷԼ ԿԵՐՋ ՏՈՒԱԿ... Շարունակուած Ա. էջէն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՏԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿՈՉ

«Էմմըսքի Ինքըրնէշընը» եւ մարդկային իրաւանց պաշտպան միջազգային այլ շարժում մը կոչ ուղղեցին ՄԱԿի մարդկային իրաւանց գործակալութեան, միջազգային դէտեր ուղարկելու Այսրբոզանեան եւ Կազ: «Էմմըսքի» ամբաստանեց խորաշխարհային շարժումը, որ անոնք «անսահման» շարժումը կոչեցին:

● ԻՏԱԼԻՈՅ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի յայտնեց, որ 6,2 միլիարդ եւրոյի (5,42 միլիարդ տոլար) օժանդակութեան ծրագիր մը մշակած է պաղեստինցիներուն համար: Եւրոգիրքին նպատակն է քաղաքի Միլին Արեւելքի մէջ խաղաղութեան ճիգերը: Պերլուսոնի աւելցուց, որ ծրագիրը պիտի ներկայացնէ Եւրոպական Միութեան վեհաժողովին, որ այս շաբաթավերջին տեղի կ'ունենայ Սպանիոյ մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

LOM ՃՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՀԻՆԵՐՈՒ LOM Ճրջանային վարչութեան դաստիարակչական յանձնարարութեամբ «Կանաճ Միջազգային Օր»ուան առիթով կազմակերպած է հանդիսութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Հիմզաբքի, 21 Մարտ 2002 շաբաթուան ժամը 10:30ին, Նշան Փալանճեան ճեմարանի «Կասպարական» սրահին մէջ: Կը խօսին՝ ԺԱՔԼԻՆ ՕԶԱՆԵԱՆ ԵՒ ԷԼՕ ՀԵՐԿԵԼԵԱՆ ԵԱՍՕԹ.- Դանդիսութիւնը կ'ընդգրկէ ցուցադրութիւն եւ գեղարուեստական յայտագիր: